N ԵԱ-ՀՄԱԾՁԲ-24/37

25.11.2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ-Ի

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՄԱՍՆԱԿԻՑ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով ԵԱ-ՀՄԱԾՁԲ-24/37 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահի 2024 թվականի նոյեմբերի 25-ի զեկուցագիրը՝

ՊԱՐԶԵՑԻ

1. **<u>Գնահատող հանձնաժողովի նախագահի ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

Գնահատող հանձնաժողովի նախագահը «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի տնօրենի ժ/պ-ին (այսուհետ՝ Պատվիրատուի ղեկավար) ուղղված 2024 թվականի նոյեմբերի 25-ի զեկուցագրով հայտնել է հետևյալը.

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի կարիքների համար ապահովագրական ծառայության ձեռքբերման նպատակով ԵԱ-ՀՄԱԾՁԲ-24/37 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում, որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «Սուսաննա Չելիկյան» ԱՁ-ն (ՀՎՀՀ՝ 25324335, գործունեության հասցե՝ ՀՀ ք. Երևան Նաիրի Զարյան 74 Բ, հեռ.՝ +37496901600, էլ-հասցե՝ susannaherher@gmail.com):

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի կողմից գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության և պայմանագիր կնքելու որոշման հրապարակմանը հաջորդող 4-րդ աշխատանքային օրը՝ 06.11.2024թ, «Սուսաննա Չելիկյան» ԱՁ-ին՝ Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը:

18.11.2024թ Հանձնաժողովը արձանագրել է, որ «Սուսաննա Չելիկյան» ԱՁ-ն սահմանված ժամկետում՝ ոչ ուշ, քան 13.11.2024թ ներառյալ, սահմանված կարգով չի ներկայացվել «Սուսաննա Չելիկյան» ԱՁ-ի կողմից հաստատված պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը «Սուսաննա Չելիկյան» ԱՁ-ի հայտը մերժել է, և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջները կիրառելու նպատակով «Սուսաննա Չելիկյան» ԱՁ-ի հայտը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը որոշել է ներկայացնել «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ-ին:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկվել է «Սուսաննա Չելիկյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կայացնել պատճառաբանված որոշում և հիշյալ որոշումը գրավոր ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

2. **<u>Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի կարիքների համար 2024թ. հոկտեմբերի 24-ին հայտարարված ապահովագրական ծառայության ձեռքբերման նպատակով ԵԱ-ՀՄԱԾՁԲ-24/37 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում, որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «Սուսաննա Չելիկյան» ԱՁ-ն:
2. «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի կողմից 06.11.2024թ.-ին «Սուսաննա Չելիկյան» ԱՁ-ին ծանուցվել է պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը:
3. 18.11.2024թ Հանձնաժողովը արձանագրել է, որ «Սուսաննա Չելիկյան» ԱՁ-ն սահմանված ժամկետում՝ ոչ ուշ, քան 13.11.2024թ. ներառյալ, սահմանված կարգով չի ներկայացրել «Սուսաննա Չելիկյան» ԱՁ-ի կողմից հաստատված պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները:
4. Գնահատող հանձնաժողովը որոշել է «Սուսաննա Չելիկյան» ԱՁ-ի հայտը մերժել է, և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջները կիրառելու նպատակով «Սուսաննա Չելիկյան» ԱՁ-ի հայտը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը որոշել է ներկայացնել «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ-ին:

3. **<u>Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Պատվիրատուի ղեկավար՝ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝ Բ. Կիրակոսյանս, ուսումնասիրելով Գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից 2024 թվականի նոյեմբերի 25-ին ներկայացված զեկուցագիրը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած **պարտավորությունը, որը հանգեցրել է** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ **գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը** և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: **Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու** կամ կնքված պայմանագրի **վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու** կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու **օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:** Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Կարգի 41-րդ կետի համաձայն, եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն, եթե Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի ,եե պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպես. «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի կարիքների համար ապահովագրական ծառայության ձեռքբերման ԵԱ-ՀՄԱԾՁԲ-24/37 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում, որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «Սուսաննա Չելիկյան» ԱՁ-ն:

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի կողմից 06.11.2024թ-ին «Սուսաննա Չելիկյան» ԱՁ-ին ծանուցվել է պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը:

18.11.2024թ Հանձնաժողովը արձանագրել է, որ «Սուսաննա Չելիկյան» ԱՁ-ն սահմանված ժամկետում՝ ոչ ուշ, քան 13.11.2024թ. ներառյալ, սահմանված կարգով չի ներկայացրել «Սուսաննա Չելիկյան» ԱՁ-ի կողմից հաստատված պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները:

Գնահատող հանձնաժողովը որոշել է «Սուսաննա Չելիկյան» ԱՁ-ի հայտը մերժել:

Ուսումնասիրելով հիմքերը, դրանք համադրելով առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Սուսաննա Չելիկյան» ԱՁ-ն թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ խախտել է **գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:**

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացրած հիմքերը՝ «Սուսաննա Չելիկյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու համար, գնահատել բավարար:

2. «Սուսաննա Չելիկյան» ԱՁ-ի ներքոնշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Սուսաննա Չելիկյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով.

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ/ ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագի	

			գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	ր կնքելու իրավունքից	գնման ընթացակարգ ի ծածկագիրը
,Սուսաննա Չելիկյանե ԱՁ	ՀՎՀՀ 25324335	ՀՀ ք.Երևան Նաիրի Զարյան 74 Բ			X	22.11.2024թ. ԵԱ-ՀՄԱՇՁԲ-24/37

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ Բ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ